№ 172 ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10

1903

ԿԻՐԱԿԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10 № 172

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լրբութիւնը դողում է. Կանանց մանկավարժական բարձրագոյն կուրսերը Օդեսայում. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ինչ է կատարվում Մակեդոնիայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բալկանեան Թերակղզում շարունակվում է այն խառնաշփոթ վիճակը, որ առաջացել է մակեդոնական շարժման պատճառով: Մակեդոնական չէտերը գործում են ամենաեռանդուն կերպով և աշխատում են պարզել ապստամբութեան դրօշակ ընդարձակ տարածութեան վրայ: Բուլգարիան պաշտօնապէս իրան չէզոք է պահում, սակայն բուլգարացիներից շատերը մակեդոնական լեռներում գործում են մակեդոնացիների հետ միասին, մասնակցելով ապստամբական շարժումներին:

Թիւրքաց կառավարութիւնը, որ վերջացած էր համարում Մակեդոնիայի յուզմունքները, շուարել է նոր շարժումներից և սկսում է նորից կազմակերպել ապստամբութեան ճնշման գործը, որը սակայն դժուարացել է այն պատճառով, որ պէտք է միաժամանակ մաքառումներ ունենալ այն ընդարձակ տարածութեան վրայ, որտեղ գործում են չէտերը:

Եւրոպական հասարակական կարծիքը համակրութեամբ և ցաւակցութեամբ է վերաբերվում մակեդոնացիներին, բայց ոչ մի լուրջ տրամադրութիւն չէ ցոյց տալիս ներգործական դեր բարձելու պետութիւնների վրայ այդ առիթով: Համակրութիւնը մնում է պլատոնական և չէ կարողանում գործնական բաւարար լուծում տալ թշուառ Մակեդոնիայի ռեֆորմների հարցին:

Եւ որովհետև Եւրոպան չէ ուզում կռուել Թիւրքիայի հետ զանազան պատճառներով, ուստի և եւրոպական բոլոր սպառնալիքները դառնում են անզօր և անհամոզեցուցիչ Թիւրքական վարչական շրջանների համար:

Մենք յայտնել էինք, որ ֆրանսիական նախագահ Լուբէի Անգլիա ճանապարհորդելու առիթով անգլիացիների և ֆրանսիացիների մէջ սկսվեցին նշմարվել մի առանձին մտերմութեան և փոխադարձ յարգանքի ու համակրութեան հաւաստիացումներ: Թէ Անգլիայում և թէ Ֆրանսիայում այժմ գործում են մի շարք խոշոր անձնաւորութիւններ, որոնք դիտաւորութիւն ունեն երկու պետութիւնների մէջ համաձայնութիւն կայացնել տալ սուր ընդհարումներից խուսափելու և նրանց մէջ ծագած թիւրիմացութիւնները կարգադրելու միջնորդ դատարանի միջոցով:

Անկասկած, չը պէտք է մոռանալ, որ Ֆրանսիան կապված է Ռուսաստանի հետ ամուր դաշնագրով և ուրեմն Անգլիայի մերձեցումը Ֆրանսիայի հետ կարող է վերաբերել միայն այն հարցերին, որոնք շօշափում են այդ երկու ազգերի շահերը և չեն վերաբերում միջազգային այնպիսի խնդիրների, որտեղ կարող են վտանգված լինել Ֆրանսիայի դաշնակցի շահերը:

Մասնաւոր մերձեցումներ նկատվում են և ուրիշ պետութիւնների մէջ, սակայն նրանք ունեն սահմանափակ նշանակութիւն և միայն ժամանակը և հանգամանքները կարող են նրանց տալ աւելի մեծ և ազդեցիկ նշանակութիւն: Անգլիացիների և ֆրանսիացիների փոխադարձ յարգանքի արտայայտութիւնները առ այժմ ունեն աւելի հասարակական կուլտուրական նշանակութիւն, քան քաղաքական:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐԲՈՒԹԻՒՆԸ ԴՈՂՈՒՄ Է

Մի դեռահաս, հազիւ 17 տարեկան գեղջկուհի, մէկը այն հարիւրաւորներից, որոնք տնտեսական ծանր պայմաններից ճնշված, հարստահարված, կտրվում են իրանց հայրենական հողից և օտարութեան գիրկում՝ մասնակցելու գոյութեան գաղափարով վսեմ, բայց էութեամբ կեղտոտված կռւին, որոնք սակայն, թոյլ, անօգնական, անպաշտպան լինելու պատճառով զոհ են գնում մեր դարի հռչակաւոր կուլտուրական քաղագործութիւններին, լրբացած կրքերին և ապա համաշխարհային աւաթալի մսավաճառութեան ապրանք դառնում,—ասում եմ, մէկը այդպիսիներից դիմում է Բագուի ոստիկանական առաջին մասի պրիստաւին և գանգատվում է, որ յուլիսի 27-ին բժշկապետ N., որի մօտ աղախին էր վարձվել ցերեկվայ ժամը 12-ին, մինչև երեկոյեան ժամը 7-ը իրան բռնաբարում է:

Թէև այդ լուրը չէ տպագրվում, սակայն իրարանցումն ընկնում է քաղաքի այս կամ այն շրջաններում: Գործը օրինական ընթացք է ստանում և անցնում քննիչին ու դատախազին: Անամօթ և համարեա միշտ անպատիժ լրբութիւնը սկսում է դողալ և ահա բաջագործ բժշկի պաշտօնակից կոլլեգաները սկսում են ամեն տեղ, ուր միայն հնարաւոր է, թմբկահարել, թէ դա մի անամօթ զրպարտութիւն է, շանտաժ է և այլն: Դրանց ձայնակցում են և իրանց թայֆի միւս ներկայացուցիչները—կառավարիչներ, ինժեներներ, ուրիշ տուզեր: Մինչև օրս ոչ մի ջանք չէ խնայվում, նախ քան դատաստանական նախնական քննութիւնը վերջանալը՝ հասարակական կարծիքի և տրամադրութեան վրայ ազդելու:

—Պարոններ, սպասեցէք մինչև քննութեան վերջանալը, ապա միայն դատապարտեցէք, մենք առաջինը կը թքենք նրա երեսին, եթէ դա ճիշտ լինի,—ասում են մի քանիսը: Թէ ինչպէս են Բագուի «բարձր շրջաններում» թքում իրանց դատակարգում լրբութեան երեսին,—այդ տողերիս գրողը լաւ գիտէ:—Պարոններ, չէ կարելի բժշկի պատուի հետ այդպէս խաղալ, դա յանցանք է:

Բժշկի պատիւ...

Մեր ինտելիգենցիայի ամբողջ բարոյական պատկերը հրապարակի վրայ է,—այն ինտելիգենցիայի, որը իսկի չէ վրդովվում, երբ այդպիսի լրբութեան հերոսը լինում է մի համալ, մի բանւոր, մի խեղճ ու կրակ հողեղէն...

Մինչդեռ մի կողմից այդպիսի ագիտացիա է տեղի ունենում,—միւս կողմում քաղաքակրթված զազանի զոհը [illegible], գլուխը կորցրած կանգնած է մենակ, չունի նա պաշտպաններ, ագիտատորներ և պրեստիժի նախանձախնդիրներ: Նա, իր ողորմելի անմեղութեամբ, չէ էլ մտածում, երևակայում, թէ ինչ թակարդ են պատրաստում իրան համար և երբ յայտնում են, թէ իրան ստախօս են անուանում, դէպքը՝ խաբերայութիւն,—նա դրանից էլ նոյնքան կատաղում և վրդովվում է, որքան կատարված իրողութիւնից ու միայն ցնցող հեկեկանքներով իրան անմեղութիւնը պաշտպանում:

Ինչպէս գիտէք, կայ Բագւում և կանանց պաշտպանող ընկերութիւն և ինչպէս կը վերջանայ այդ անամօթութեան հանդոյցը—ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Ստատիստ

Բագու

ԿԱՆԱՆՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՒՐՍԵՐԸ ՕԴԵՍԱՅՈՒՄ

(Նամակ Օդեսայից)

Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի միջնորդութիւնը՝ կանանց բարձրագոյն կուրսերի հիմնարկութեան մասին՝ աջողութեամբ պսակվեց: Թագաւոր Կայսրը, լուսաւորութեան մինիստրի զեկուցագրի հիման վրայ, յուլիսի 12-ին հրամայեց՝ որպէս փորձ, 6 տարի ժամանակով, տեղական իգական գիմնազիաներից մէկում բանալ վերոյիշեալ կուրսերը: Կուրսերը պէտք է ունենան երեք տարվայ դասընթացք: Ունկնդրուհիներ կարող են լինել իգական միջնակարգ դպրոցների վկայագիր ունեցողները, որոնց պէտք է աւանդվեն բարձր գիտութիւններ՝ պատրաստվելու համար մանկավարժական գործունէութեան, գիմնազիայի բոլոր դասարաններում դասաւանդելու իրաւունքով:

Կանանց բարձրագոյն ինստիտուտի միտքը յղացել է պ. հոգաբարձուն դեռ 15 տարի սրանից առաջ, 1895 թւին նոյն միջնորդութիւնը յարուցել են տեղիս համալսարանի պրօֆեսորները՝ առաջարկելով իրանց յօժարակամ աջակցութիւնը դասախօսութիւններ կարդալու: Միջնորդութիւնը կրկնվել է նորից 1900 թւին: Վերջապէս անցեալ տարվայ հոկտեմբերին ուսումնարանական շրջանի հոգաբարձուն նորից դիմում է լուսաւորութեան մինիստրութեան՝ կանանց բարձրագոյն կուրսերի ցանկալիութեան և ծայրայեղ անհրաժեշտութեան մասին Օդեսայում, պատմա-լեզուագիտական և ֆիզիքօ-մաթեմատիկական լիակատար դասընթացքների ծրագրով.

Յարուցանելով այդպիսի միջնորդութիւն, հոգաբարձուն մատնացոյց է արել իգական գիմնազիայի ուսուցչուհիների թերի պատրաստութիւնը, որպիսի պակասը լրացնել կարող է միայն կանանց բարձրագոյն ինստիտուտը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Վենետիկ, օգոստոսի 12-ին

Նիցշէաշունչ վէպը։—Թերութիւնները և գեղեցկութիւնները։—Ոճ և լեզու։—Հեղինակին ապագան։

Նախորդ յօդուածով մը պատմեցի Տուրկին-ին նիւթը. հիմակ ալ գրական քանի մը դիտողութիւններ:

Հ. Երեմեանին հեղինակութեան ընթերցումը աւարտելէ յետոյ, կը մտածենք, որ այդ գործը վէպէ մը աւելի, դիւցազներգութեան մօտեցող բանաստեղծութիւն մըն է. Վիպագիրը՝ գեղարուեստի սիրահար մը, ու ընկերաբանական գաղափարներով տոգորուած միտք մը՝ հոգ չէ տարած, որ իր ընթերցողը մշտարծարծ հետաքրքրութեամբ անհամբեր պահէ: Կարծես կը վախնար որ, եթէ հանգոյցներու լուծման անհամբեր սպասենք, եթէ չարունակ՝ «նայինք վերջը ինչ պիտի ըլլայ»-ով հետաքրքրուինք, ան ատեն ալ գաղափարներու շատ ուշադիր չենք հետևիր, անոնց վրայէն շուտ շուտ կը ցատկենք և նկարագրուած տեսարաններուն առջև կանգ չենք առներ: Ինքը բարձրագոյն ձգտումներ ունի. ժողովուրդը զբօսցնող մը չէ:

Տուրկին-ին նիւթը թէև մեր հին կեանքէն առնուած է, բայց վէպը ժամանակակից գաղափարներ կը թարգմանէ: Մեր վերջին տաս տարիներու պատմութեան զաւակն է: Հեղինակին սիրտը այն «սեւխուցն» է, ուրկէ մեր հրդեհին լոյսը ներս զարնելով, օրուան գաղափարները լուսանկարած է: Աչքերնուս առջև պարզապէս նիցշէաշունչ գործ մը ունինք: Վիպագրին ընկերաբանական իմաստասիրութիւնը մէկ բառի մէջ կամփոփուի՝ Ուժ: Վանականը Հին կտակարանին նախապատուութիւն կընծայէ Նորին վրայ: Աւետարանը քիչ մը ատեն մոռցնել տալ կուզէ: «Սորկական առաքինութիւնները» մեր ազգի կեցութեան համար չեն: Տէր Եհովային պատուիրանքը յիշելու է. «ակն ընդական, ատամն ընդ ատաման»:

«Ուժը» իր բոլոր արտերևոյթներովը՝ որոնց մէջ էն փայլունը վրիժառութիւնն է՝ Հ. Երեմեանին սեւեռուն գաղափարը ըլլալ կը թուի: Ու վիպագիրը այդ գաղափարը յանձին Տրունի տիկնոջ կը մարմնացնէ: Մեր միտքը ամբողջովին այդ դէմքին վրայ սևեռելու համար, անգթօրէն կը ջնջէ ամէն ինչ, որ հետաքրքրութեան ճարակ տալով, ուշադրութիւննիս կրնայ տարտղնել. հետեւաբար հեղինակը մեզի կատարուած, լմնցած գործերու հանդէպ կը դնէ միշտ, երբ ալ սպասելիք բան մը չունինք: Տուրկին իր զաւակները սպաննուած կարծելով, անոնց վրէժը լուծելու կելլէ. և մենք, ընթերցողներս, ահա մէկէն ի մէկ մի և նոյն րոպէին կիմանանք, թէ՝ զաւակները սպաննուած չեն եղեր, թէ՝ մայրերնին ինքն է զանոնք սպաննած, սխալմամբ: Վերջացած, լմնցած գործեր. ալ ինչ բանի սպասենք: Նմանապէս, մեզի շատ ուշ կը հաղորդուի թէ Տուրկինը իր ամուսնին վրէժը որմէն և ինչպէս պիտի լուծէ: Վրիժառութեան թիրախ գանձապետ քուրմը հազիւ թէ աչքերնուս առջև կը բերուի, և ահա գրեթէ նոյն րոպէին ալ դաշունահար դիակը ինկած կը տեսնենք զայն:

Տուրկին-ին հեղինակը դէպքերը, պատահարները իրարու քով կը բերէ ոչ թէ սանի մը վերջը իմանալու հետաքրքրութիւնը արթնցնելու համար, այլ միայն և միմիայն իր հերոսուհիին հոգեկան զօրութիւնը ցոյց տալու նպատակաւ: Իրեն համար, գրքի մը մէջ նկարագրուած դէմք մը կտաւի մը վրայ նկարուածին յար և նման կրնայ ըլլալ: Նկարչութեան արուեստը վիպագրութեան մէջ կը փոխադրէ: Իր գրական-գեղարուեստական վարդապետութիւնը կը թուի ըլլալ այն, թէ ինչպէս որ պատկեր մը կրնայ մեր միտքը գրաւել և մեր սիրտը յափշտակել առանց ոևէ վիպական մեքենայութիւններու, հանգոյցներու, նոյն և դէմք մը վէպի մը մէջ կարող է մեր մտքին տիրել, մեր ամբողջ էութիւնը սարսեցնել, առանց «ա՛ս, նայինք [illegible] վերջը ինչ պիտի ըլլայ»-ի մը սպասցնելու: Որպէս զի մեծ գաղափար մը մտքերու վրայ ազդեցութիւն բանեցնէ, մի՞թէ անպատճառ պէտք է որ միշտ իրեն առջևէն կարապետ ունենայ, և իրեն ետևէն քարշքաշէ երկարաձիգ շարք մը այն «այլ-այլ դէպքերուն», որոնք օրագիրներու մէջ կը հրատարակուին: Հ. Երեմեան վիպական արուեստի իր այս ըմբռնումը Տուրկին-ի մէջ գործադրած է, և ըսեմ՝ շատ յաջողութեամբ: Սակայն պէտք է նաև ընդունիլ, որ Տուրկին-ը նոյն իսկ իր այս յատկութեանը պատճառաւ, այն վէպերէն չէ, որ մէկ շունչով կը կարդացուին. բայց միանգամայն, մեզի [illegible] պահող շատ վէպերու պէս, զայն մէկդի չենք նետեր, անգամ մը կարդալնուս յետոյ: Քանի օր, երբ պարզ ընթերցող մը, իմ տպաւորութիւններս կը գրեմ, կարող եմ ըսել թէ, Տուրկին-ը ձեռքի մօտ տեղ մը կրնանք պահել, զայն երբեմն երբեմն բանալու և այս կամ այն էջը կարդալու, ինչպէս որ մեր հոգեկան տրամադրութիւնը կը թելադրէ:

Այս հրապոյրին գաղտնիքը ո՛ և է [illegible] չունի վիպական արհեստին գաղտնիքին հետ. Տրունի իշխանուհին մեզի իրեն կը քաշէ, վասն զի խորհրդանշան ու խորհրդաւոր կին մըն է: Երբ Երասխի ալիքներուն վրայ առաջին անգամ իրեն կը հանդիպինք, հիացարհուր կը մնանք և պատկառանք կը զգանք: Այո, այդ կինը «անխոհեմ» կը գտնենք: Ինքզինքը խորտակում կարձակէ այն պահուն, ուր լռութիւն պէտք է փրկելու համար: Բայց կը զգանք որ նուազ պիտի սիրէինք զինքը եթէ «խոհեմուհի» ներկայանար: Կարդացէք այդ գլուխը, ու մտքերնիդ դէպի Սասուն կը սուրայ: Շաքէները տեսնել կը կարծէք: Լեռնէ լեռ, անտառէ անտառ, մինչև մեր Բագրեւանդայ մեհենին դուռը ետևէն կը վազենք, վասն զի անոր մէջ հայ կնոջ մտատիպարը կերեւակայենք: Մտատիպար հոգեկան, մտատիպար մարմնական: Փափուկ ու կորովալից, գգուիչ ու ծանրագլուխ կինն է, պարտականութեան գիտակցութիւնը ունեցող: Իր գինանշանին մէջ պիտի չերևի «քաղաքագէտ» եղէգը որ հովուն առջև խոնարհիլ գիտէ, վտանգը անցնելու հա-

Շեշտված է զեկուցագրի մէջ և գիմնազիաների բարձր դասարաններում կին դասատուների աչքի ընկնող բացակայութիւնը։

Ութ-դասարանեան գիմնազիաներում գոյութիւն ունեցող լրացուցիչ մանկավարժական դասարանը չէ կարողանում գոհացում տալ այդ կարիքին, որովհետև տալ մի տարվայ ընթացքում 7 դասարան աւարտող աշակերտուհիներին՝ ի միջի այլոց լրացուցիչ առարկաների կատարեալ գիտական և մանկավարժական պատրաստութիւն՝ անհրաժեշտ ուսուցչուհի կոչման համար, պարզ է, անկարելի է։ Այն ինչ, կանանց մանկավարժական գործունէութեան փորձը ցոյց է տալիս, որ կանայք կարող են նոյնքան աջողութեամբ վարել այդ գործը, որքան և տղամարդը, շնորհիւ իրանց ջանասիրութեան և բնական մօտիկութեան դէպի աշակերտուհիները։ Կանանց կուրսերը կը տան իրանց լսողներին հիմնաւոր մանկավարժական պատրաստութիւն և կարելի է յուսալ, որ մօտ ապագայում շատ իգական գիմնազիաներ կունենան իսկապէս զարգացած կին—մանկավարժներ։

Այդ միտքը լուսաւորութեան մինիստրութիւնը գտաւ օգտակար ու ցանկալի և առաջարկեց հոգաբարձուին ներկայացնել ծրագիր այդ կուրսերի մանրամասն դրութեան մասին, դասաւանդման նախագիծը, համապատասխան ծրագիրները և այլն։ Մշակելու համար այդ հարցերը ուսումնարանական շրջանի հոգաբարձուն կազմեց յանձնաժողով համալսարանի պրոֆէսօրներից, իգական գիմնազիաների դասատուներից և այլն, որի գլուխ կանգնեց պրոֆէսօր Լանգէ՝ կանանց բարձր կուրսերի հիմնելու վաղուցվայ նախաձեռնողներից մէկը։ Յանձնաժողովի մէջ մտան պատմութեան, գրականութեան, մաթեմատիկայի պրոֆէսօրներ և օտար լեզուների դասատուներ։ Յանձնաժողովը պէտք է մշակէր և ընդունելութեան կանոնները, որոշէր վճարի քանակը լսելու իրաւունքի համար և այլ հարցեր։

Յանձնաժողովի պարապմունքները ներկայացված էին մինիստրութեան և այժմ, ինչպէս վերը ասացի, կուրսերը բարձրագոյն թոյլատրված են հետևեալ հիմունքներով։

1) Կուրսերի անմիջական կառավարութիւնը յանձնվում է դիրեկտորին, որին նշանակում է ուսումնարանական շրջանի հոգաբարձուն համալսարանի պրոֆէսօրներից. նա պէտք է կառավարէ առանձին խորհրդի և տեսչուհու մասնակցութեամբ։ Տեսչուհու պարտականութիւնները յանձնվում են այն գիմնազիայի կառավարչուհուն, որին կից բացվում են կուրսերը։

2) Կազմվում է հոգաբարձական մարմին կառավարելու համար կուրսերի բացառապէս տնտեսական մասը։

3) Դասախօսութիւնները կը կայանան այն ծրագիրների հիման վրա, որ հաստատել է լուսաւորութեան մինիստրութիւնը։ Կուրսերը եռամեայ են և մասնագիտութիւններով բաժանվում են հետևեալ հինգ բաժանմունքների. ա) պատմական, բ) ռուս լեզուի և գրականութեան, գ) ֆրանսերէն լեզուի և գրականութեան, դ) գերմաներէն լեզուի և գրականութեան և ե) մաթեմատիքական։

4) Կուրսերի ժամանակաւոր դրութիւնը հաստատում է լուսաւորութեան մինիստրութիւնը։ Կուրսերում երկու տարի կը նուիրվի գիտական պարապմունքների, իսկ մէկ տարին կը նուիրվի գործնական-մանկավարժական պատրաստութեան դասաւանդման համար։

Կուրսերը գոյութիւն կունենան սեփական միջոցներով, առանց նիւթական օժանդակութեան կառավարութեան կողմից՝ այն վճարներով, որ կը ստացվեն լսողներից։ Աւարտողներին իրաւունք է տրվում դասաւանդելու ընտրած մասնագիտութիւններից գիմնազիայի բոլոր դասարաններում։

Կանանց մանկավարժական ինստիտուտի հիմնարկութիւնը առաջին օրինակն է Օդեսայում և կայսրութեան ամբողջ հարաւում։

Այժմ ամեն ինչ արված է։ Մնում է, որ հասարակութիւնը թօթափէ իր անտարբերութիւնից՝ կանանց բարձր գիտութեան վերաբերութեամբ, առաջ գայ, իր հասունութիւնը ցոյց տալ կեանքի առաջ մղած այդ նշանաւոր գործում և իր աջակցութեամբ պահպանէ կուրսերի յարատևութիւնը։ Հարուստ Օդեսայում կը գտնվեն շատերը, որոնց խորթ չէ կանանց լուսաւորութեան ձգտումը, կանանց՝ որոնք միշտ պատուաւոր են դուրս եկել մինչև այժմ իրանց տրված սահմանափակ ասպարէզներում։ Կին-բժիշկների անձնուիրութիւններով նրանք արդէն ձգել են իրանց լուման հասարակական գործունէութեան տուփը և բարեխղճութեամբ կատարում են իրանց պարտքը հասարակութեան առաջ։

Բազմաթիւ է գաղափարական հիմնարկութիւնների թիւը Օդեսայում. մէկը միւսի ետևից երեան են գալիս հասարակական ֆիլանտրօպներ և երեան կը գան այժմ, և միանգամ ընդ միշտ կապահովեն այդ գեղեցիկ հիմնարկութեան գոյութիւնը։ Լուսաւորութեան այդօրինակ հիմնարկութիւնների երբեմնակի հիւսիսից դէպի հարաւ ընկնելը կարող է յոյս ծառայել և մեր Կովկասի համար և թերևս մի օր հարաւն էլ իր կողմից իր լուսաւորութեան ցոլերը տարածէ և մեր Կովկասին, ուր բարձրագոյն կրթութեան տենչով տառապում են կին թէ տղամարդ։ Կանանց բարձրագոյն ինստիտուտը Օդեսայում, անկասկած, կը ձգէ դէպի իրան և շատ կովկասցիների, որոնց, աւելորդ է ասել, աւելի ձեռնտու, նպաստաւոր և դիւրին է Օդեսայում յագեցնել իրանց ուսման ծարաւը, քան անհիւրասէր և մառախլապատ հիւսիսում, ուր տնտեսական և կլիմայական պայմանները կործանիչ ազդեցութիւն թողնելու գործում չարունակ մրցում են իրար մէջ։

Մանկավարժական գործունէութեամբ կինը աւելի հեշտութեամբ է հարթում իր ուղին և այստեղ էլ նա կատարում է իր մայրական պարտականութիւնները։ Ի սրտէ շնորհաւորում ենք կանանց բարձրագոյն ինստիտուտի բացումը Օդեսայում։

Ար. Թօն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային ուպրավան իր վերջին նիստում, քննելով քաղաքային ինքնավարութեան զանազան հաստատութիւնների մէջ ծառայողների ռոճիկը աւելացնելու ծրագիրը, հաւանութիւն տուեց նրան և որոշեց ներկայացնել դումայի հաստատութեանը։ Այդ ծրագրով իւրաքանչիւր ծառայող, իր ծառայութեան առաջին հնգամեակից յետոյ, իրաւունք ունի 10%-ի աւելացում ստանալ, իսկ երկրորդ հնգամեակից յետոյ 15%-ի աւելացում։ Հին ծառայողների ռոճիկները կաւելացվեն այնքան տոկոսով, որքան տարի մինչև այժմ ծառայել են։ Ուպրավայի հաշւով՝ բոլոր ծառայողների ռոճիկների աւելացման համար հարկ կը լինի քաղաքային միջոցներից նշանակել 10,000 րուբլի։

Օգոստոսի 8-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվեց Մկրտիչ Մանուկեանցի, Սիմէօն Զօրջարեանցի և Ալէքսանդր Բաղալովի գործը, որոնք մեղադրվում էին ոսկեայ և արծաթեայ կեղծ դրամներ շինելու մէջ։ Դատարանը յանցաւոր համարելով երեք մեղադրվածներին, դատապարտեց նրանց 4 տարվայ տաժանակիր աշխատանքների՝ զրկելով բոլոր իրաւունքներից։

Վրաց լեզուի ցենզօր Գ. Ժուրուլի, որ մօտ ժամանակներումս ընտրված էր Բաթումի քաղաքային ուպրավայի անդամ, հեռացաւ իր նախկին պաշտօնից և մօտ օրերումս կուղևորվի իր նոր պաշտօնատեղին։

Առաջիկայ սեպտեմբեր ամսի 1-ին կը բացվի Պետերբուրգում կլիմատոլօգիայի և բալնէօլօգիայի համառուսական երկրորդ ժողովը, որը կը տևէ մինչև նոյն ամսի 7-ը։ Ժողովի անդամները կը կատարեն բազմաթիւ խմբական ճանապարհորդութիւններ, ի միջի այլոց, և դէպի Գագրի, տեսնելու բուսաբուծութեան ցուցահանդէսը, որ այդ ժամանակ արդէն բացված կը լինի։ Ֆինանսների մինիստրը, կամենալով դիւրութիւններ տալ ժողովի անդամներին նրանց ճանապարհորդութիւնների ժամանակ, 500 տոմսակ է դրել նրանց տրամադրութեան տակ, որոնցով ձրիաբար կարող են նրանք ճանապարհորդել պետական երկաթուղիներով։

Օգոստոսի 14-ին մի խումբ ճանապարհորդներ պատրաստվում են ուղևորվել Թիֆլիսից Երևան, ապա Էջմիածին, իսկ այնտեղից դէպի Իգդիր Մասիսի գլուխը բարձրանալու նպատակով։ Այս ճանապարհորդութեանը, «Нов. Обозрѣніе» լրագրի ասելով, մասնակցում են նաև կովկասեան կառավարչապետի խորհրդի անդամ Սուլթան-Կրիմ-Գիրէյ, Թիֆլիսի ֆիզիքական դիտանոցի՝ վերատեսուչ Գլասէկ, կին-բժիշկ Էգիւզ-Կրիմ, Ս. Եանգուլեան, ինժեներ Դավիդովսկի և ուրիշներ։ Այդ ճանապարհորդութեանը մասնակցել ցանկացողները կարող են վաղօրօք գրվել Ս. Եանգուլեանի մօտ, Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան մէջ։

«Черном. Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ շուտով կը հիմնվի մի նոր ռուսական թերթ—Բաթումի թերթ անունով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Ապստամբների ոյժը։ Մակեդոնական շարժումը օրէցօր աւելի ու աւելի զօրեղ կերպարանք է ընդունում։ Արտասահմանեան թերթերի ասելով, հրոսակախմբերում գործող մակեդոնացիների թիւը հասնում է 30,000 հոգու։

Ապստամբութեան կենտրոնական մարմինը իր տրամադրութեան տակ ունի 35,000 հրացան, որից 25,000-ը արդէն բաժանված է կռւի դաշտ դուրս եկած մակեդոնացիներին։ Իւրաքանչիւր հրացանի հետ տալիս են 150 փամփուշտ։ Բացի այդ բոլորից, կազմակերպութեան գլխաւոր մարմինը ունի նաև 3,500 կիլօգրամ դինամիտ։

Վերջին ժամանակներս մակեդոնացիների շարքերն են մտնում ոչ միայն քրիստոնեայ բուլղարները, այլ և կուցօ-վալախները, քրիստոնեայ ալբանացիները և ուրիշները։

Թէ այդ և թէ ուրիշ մի քանի նպաստաւոր հանգամանքներ քաջալերում են մակեդոնական հերոսներին և ստիպում են նրանց աւելի համարձակութեամբ գործելու։

Երիտասարդ թիւրքերը Մակեդոնիայի մասին. Երիտասարդ թիւրքերը ամեն անգամ ասպարէզ են մտնում, երբ հարցը Թիւրքիայի ապագայի, նրա ներքին ու արտաքին կազմակերպութեան մասին է լինում։ Այդ quasi հայրենասէրները այժմ իրանց ձայնը բարձրացրել են մակեդոնական դէպքերի առիթով, իրանց օրգան «Մեշվերեթում» գրելով հետևեալը.

—«Թիւրքիայում ընդունակ պետական գործիչների և օրինակելի կառավարիչների պակասութիւն չը կայ։ Այդ պէտք է հաստատեն նոյն իսկ Թիւրքիայի բարեկամները։ Բայց մեղաւոր են նրանք, երբ ամենալաւ նպատակները, ընդունակութիւնները և նախաձեռնութիւնը անզօր ու անօգուտ են դառնում բարձրից առաջված յիմար և հակասական հրամաններով...

Պաշտօնեաները անկարող են մի որ և է գործ կատարել և փողի բացակայութեան պատճառով շատ չնչին չափով են աջակցում երկրի բարեկարգութեանը։

Թիւրքիան այժմ պատերազմական դրութեան մէջ է պահում 200,000 զինուոր և դրա համար հարկաւոր ծախսերը ֆինանսական մեծ դժուարութիւններ են առաջ բերել։ Փող չը լինելու պատճառով ներկայումս գրեթէ բոլոր հասարակական աշխատանքները կանգ են առել։ Զօրքեր հեռացնելը Թիւրքիայի

մար։ Խրոխտամբարձ կաղնին է։ Կամ՝ երկնաբերձ գլխով կանգուն, կամ՝ բոլոր իրանովը գետնամած։ Բայց ո՛չ երբեք կորաքամակ երկարակեաց մը։

Ու կը հրճուինք երբ իր տասնհինգ տարուան զաւակը վայրագօրէն անգութ կը տեսնենք. վասն զի կը զգանք թէ հայ մայր մը հիմակ իր ցեղին Վաչագաններ պէտք է նուիրէ։ Այդ պզտիկը հերոսը մըն է, որ կը գոռայ թէ «Մեր տան բնագրոշմը պէտք է ըլլայ. ըմբոստութիւն ճակատագրական անգութ դժբաղդութեան դէմ. Միշտ խիզախ, միշտ արի և վայրագ, նոյն իսկ մեր վերջին շունչը փչելու ճըգնաժամին մէջ։» Ցեղային դաւանանք։

Ուշադիր կարդացէք այդ վէպը, և ամէն մէկ էջին պիտի կարծէք մեր օրուան կեանքովը ապրիլ։ Բայց վսեմացած կեանք մը։ Հ. Երեմեան քաղքենի մը չէ, և տափակութիւնը չի սիրեր։ Զարհուրանքի բանաստեղծն է։ Մեզի անտառներուն մէջ կը խորասուզէ և կը սարսափեցնէ, լեռներուն գագաթները կը հանէ, և գլուխնիս ժուռ կածէ, գետերուն վրա կը տանի և կահաբեկէ։

Ու շատ կը ցաւիմ որ Տուրկինը ռամկաւոր չէ գրուած, հեղինակը քաջ տաղաչափ ըլլալով։ Հ. Երեմեանին «վսեմ»-ը մեր աշխարհաբար գրականութեան վրա շատ աւելի հզօր ազդեցութիւն մը պիտի ունենար եթէ ռամկաւոր գրուած. մանաւանդ որ խօսակցութիւնները տաղաչափութեամբ աւելի բնական պիտի երևնային։ Իրաւ է որ Տուրկին-ին անձնաւորութիւնները դիւցազներ ըլլալով, դիւցազնօրէն կը խօսին. բայց դիւցազներու «բնական լեզուն» ալ ռամկաւորի մէջ փնտռելու է։

Պիտի չը ծանրանամ հնախօսական հմտութեան վրա որ Տուրկին-ի մէջ կերևի։ Շատ հաճելի են, շատ հրահանգիչ են մեր հին նիստն ու կացը, մեր հին սովորութիւնները, մեր հին կրօնական արարողութիւնները, վերջապէս մեր ամբողջ հին կեանքը նկարագրող էջերը։ Եւրոպացի շատ տաղանդներ հելլէն և հռոմէական քաղաքակրթութեանց իբր խանդավառ սիրահարներ գրած են. Հ. Երեմեան ալ անոնց դասէն է։ Իրաւունք ունի մտածելու թէ հին Հայաստանն ալ Եւրոպայի երկու մեծ քաղաքակրթութեանց ազդեցութիւնը կրած է։ Իբր գրագէտ՝ վարդապետ-վիպագիրը աւելի հեթանոս մըն է, քան թէ քրիստոնեայ մը։ Եւ անշուշտ իբր «հեթանոս գրող մը» նուազ դժուարութեանց պիտի բաղխի քան թէ իբր քրիստոնեայ գրագէտ մը։ Ու «ճշմարտութեան» խնդիրը մէկդի ձգելով, հեթանոսական կրօնքնիս մեզի աւելի կրնայ միացնել, քանի որ ոչ մէկերնիս Մայր-Անահիտի կերկրպագենք։

—

Եթէ «Մշակ»-ին սուղ էջերը թոյլատրէին, Հ. Երեմեանին վէպը աւելի մանրակրկիտ քննութեան մը պիտի ենթարկէի, առաջ բերելով այն բոլոր ծանօթութիւնները, դիտողութիւնները, որոնցմով ծեփուած են ձեռքս ունեցած Տուրկին-ին լուսանցքները. բայց տեղերնիս քիչ է, մանաւանդ այս առթիւ արդէն երկու յօդուած գրուելէ վերջ։ Բայց քանի մը դիտողութիւն պիտի կրնամ ընել ոճին և լեզուին վրա։

Հ. Երեմեան որ դեռ շատ երիտասարդ է, տաղանդին թափով մը պայթած է իր անդրանիկ վէպին մէջ. ոճը հարուստ է, շատ հարուստ, երբեմն երբեմն, յոգնեցնելու աստիճան։ Մեծ գրականութեան օրէնքն է շարունակաբար հարուստ, ճոխ, պատկերալից, փոխաբերութիւններով գեղուն չը գրել։ Իբրև նոր հեղինակ մը, և՛ «վսեմ» հեղինակներու հետ կենակցող մը, Հ. Երեմեան միշտ բարձրաթռիչ է. պիտի ուզէինք, որ աւելի յաճախ վայրաթեւէր։

Իր աշխարհաբարն ալ իրեն յատուկ է, ու շարունակաբար մեզի հաճելի չէ։ Մեր արդի արևմտեան գրական աշխարհաբարը աղէկ գրելու համար շատ յոգնութիւն պէտք է։ Դեռ չունենք աւարտուն լեզու մը։ Գրաբարը, Թըրքեվարը, Ֆրանսերէնը, տեղական բարբառներ իրարու կը խառնուին։ Ներդաշնակ, դիւրահասկնալի ու գեղեցիկ գրելու համար դժուարութիւնները շատ են։ Մանաւանդ որ ամեն գրող ըմբռնած չէ շեշտին դերը մեր արդի աշխարհաբարին մէջ։ Բայց «Տուրկինի» աշխարհաբարը արդէն ինքնին յառաջդիմութիւն մըն է, և այդ հատորին հրատարակուելէն յետոյ, Հ. Երեմեան իր նորանոր գրուածներուն մէջ բոլորովին կուգայ կը միանայ արևմտեան այն գրագէտներուն, որոնք միօրինակ աշխարհաբար մը ընդունելու վրա են, և մեծ մասամբ աջողած։ Այլ և այլ գրողները հիմակ իրարմէ շատ չնչին տարբերութիւններ ունին, մինչ տաս տասնհինգ տարի մը առաջ իրարու բոլորովին կը հակառակէին։

—

Հ. Երեմեան հայ վիպագրութեան վրա ներգործելու և անոր մէջ առաջնակարգ տեղ մը գրաւելու կոչուած է։ Վառ երևակայութեամբ օժտուած է, յիշողութիւնը սուր է, զգայուն է, դիտող, քննող, խորհող ու գեղասէր մը. գրողը նաև նկարիչ է։ Հայերէն լեզուն հիմնովին գիտէ, մեր պատմութեան քաջ տեղեակ է, և դրական գիտութիւններ ուսած է, ինչ որ շատ ընթացիկ առաւելութիւն մը չէ մեր մէջ։ Դեռ ուսանող եղած ատենը «ուսմանց և գիտութեանց» բառգիրք մը յօրինած է։ Մեծ գրականութեան ընտանի է։ Բայց այս բոլոր յատկութիւնները չեն բաւեր առաջնակարգ վիպագիր մը ստեղծելու համար։ Պէտք է իր ցեղը մօտէն ճանչնալ, իր աչքերովը տեսնել զայն և ուսումնասիրել, և ոչ թէ գրքերու մէջէն միայն։ Հարկ է ազգին կեանքովը ապրիլ, տեսնել երկիրը, ուր պիտի երևին վիպասանութեանց անձնաւորութիւնները։ Ժողովուրդը իր հողին վրա, իր կեանքին մէջ խորապէս ուսումնասիրելու է լուրջ վիպասան մը ըլլալու համար։ Հ. Երեմեան երկրէն հետը բերած է տպաւորութիւններ, որոնք զինքը կը ներշնչեն այսօր, բայց Տրապիզոնէն Վենետիկ գաղթման թուականէն ի վեր շատ տարիներ անցած են։ Նոր կեանքով մը պէտք է ապրել։ Ուստի կը փափագիմ, որ երիտասարդ վարդապետը, եթէ այժմ չի կրնար հանգստօրէն Թիւրքիա կենալ, բայց Կովկաս անցնի, ու բաւական ատեն մը ձեր մէջ ապրի. աչքերովը տեսնէ երկիրը, քննէ անցեալը, և դիտէ ներկան։ Մաղթենք, որ մեր գրականութեան օգտին համար այդ թոյլտուութիւնը իրեն օր մը տրուի։

***

գանձարանի համար մեծ թեթեւութիւն կը լինէր… Սակայն Բօլգարիայի բռնած ընթացքը և հրոսակախմբերի աւելանալը արգելք են դառել այդ բանին։ Բօլգարական լրագիրները գրում են, որ «միայն սուրը կարող է լուծել մակեդօնական Գորդեան հանգոյցը»։ Այդ պատճառով էլ Թիւրքիան ակամայից ստիպված է զօրքերը պահել Բօլգարիայի սահմանին մօտ և սպասել յետագայ դէպքերին»…

Դրանից յետոյ լրագիրը շեշտում է, որ այդպիսի պայմաններում բարենորոգումներ իրագործել չէ կարելի և վերջն աւելացնում է.

—«Մակեդօնական բարենորոգումները չեն իրականանայ, քանի որ դեռ վերացած չեն սուլթանի արքունիքից բղխող դժուարութիւնները և քանի որ դեռ ճնշված չէ մակեդօնական ապստամբութիւնը»…

Սակայն երիտասարդ թիւրքերը, եթէ աւելի անկեղծ լինէին, եթէ աչքի առաջ ունենային Թիւրքիայի մօտիկ անցեալը, այն ժամանակ պիտի խոստովանէին, որ առհասարակ Թիւրքիայում ոչ մի բարենորոգում չէ կարող իրականանալ, քանի նրա սօցիալական-անտեսական հիմքը վաղուց արդէն քայքայված է և հիմնական վերաշինութեան է կարօտ։ Քանի որ այդ վերաշինութիւնը դեռ տեղի չէ ունեցել, զանազան կողմերում խլրտումները կը շարունակվեն, մինչև որ վերջնականապէս փուլ բերեն անթիւ զոհերի արիւնով ցօղված այդ խարխուլ շէնքը, նրա փլատակների տակ թաղելով մահմեդական բռնակալութեան դարաւոր շղթաները։

—

Մակեդօնական մի նոր Ժաննա դ'Արկ։ Մի քանի օր առաջ լրագիրները հաղորդեցին, որ մի բօլգար ուսուցչուհի հրոսակախումբ է կազմել և կռւում է տղամարդկանցից ոչ պակաս քաջութեամբ։

Այժմ նոր տեղեկութիւններից երեւում է, որ դա միակը չէ, ուրիշ շատ կանայք մտել են ապստամբների շարքերը։ Դրանցից ամենանշանաւորն է մի 18 տարեկան աղջիկ՝ Զօյկա Իվանօվա անունով։ Նա արդէն մասնակցել է 17 անգամ ճակատամարտերի և միշտ էլ զարմանալի հերոսութիւն ցոյց տուել։ Այժմ նա ման է գալիս հրոսակախմբերի մէջ և ազատութեան երգերով ոգեւորում է ապստամբներին։ Շատ անգամ է նա ռումբեր գցել և միշտ էլ անվնաս մնացել։ Բօլգար ժողովուրդը մեծ պատկառանքով է յիշում այդ հերոսուհու անունը և ամբողջ առասպելներ է յօրինել նրա մասին։

—

Թուրքիան զինվում է։ Մակեդօնական ահեղ շարժումը խանգարել է Ըլդըզի հանգիստը։ Ամեն օր խորհրդակցութիւններ են տեղի ունենում այնտեղ և նորանոր հրահանգներ ու ծրագիրներ մշակվում։ Թիւրքիան պատերազմական դրութեան մէջ է դրել իրան. շարունակ ռազմամթերք է ուղարկվում դէպի Մակեդօնիա. զօրքեր են գնում։ Կառավարութիւնը արդէն պայման է կապել 1,200 ձի գնելու մասին։ Իսկ յուլիսի 27-ին հրատարակված է սուլթանի իրադէն, որով նա յայտարարում է, թէ գերմանական «Կրուպպ և Ընկ.» գործարանին 96 արագաձիգ թնդանօթներ են պատուիրված։

Մի խօսքով բոլոր նշաններից երեւում է, որ Թիւրքիան լուրջ կերպով զինվում է պատերազմի համար…

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Information» լրագրին գրում են Բելգրադից, թէ երկրի դրութիւնը Սերբիայում քանի գնում, աւելի և աւելի վատանում է։ Արքայական տան փոփոխութիւնը, ըստ երեւոյթին, ոչ մի լաւ բան չը բերեց իր հետ. պետութեան մէջ տիրում է նախկին խառն ու անկարգ վիճակը։ Շատ կարելի է, որ Պետր I թագաւորը ոգեւորված է ամենալաւ դիտաւորութիւններով և ցանկութեամբ թեթեւացնելու իր ժողովրդի ծանր դրութիւնն ու կարգ հաստատելու երկրի մէջ, բայց նա չունի այդ բանի համար կարեւոր ոյժը,—նա չէ կարողանում ազատվել այն անձերի ազդեցութիւնից, որոնք գահ բարձրացրին նրան, և գտնվում է նրանց ճնշման ու ազդեցութեան տակ։ Զանազան ռէֆօրմներ մտցնելու փորձերը, որոնք փոքր ինչ ազատէին ժողովուրդը նրա վրա դրված ծանրութիւններից և մի քանի իրաւունքներ տային նրան, բոլորովին ապարդիւն անցան այն դիմադրութեան պատճառով, որ ցոյց են տալիս թագաւորին իրանց կամքը թելադրողները։ Թագաւորի շատ ծրագիրներ հէնց այնպէս էլ ծրագիր մնացին։ Ինչպէս յայտնի է, թագաւորի փորձը արքայական տան հօֆմարշալ նշանակելու փոխ-գնդապետ Լէշյանինին յայտնի բողոք առաջացրեց Պետր I-ին շրջապատող օֆիցերների մէջ և պատճառ դարձաւ մինիստրական ճգնաժամի։ Զինւորական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ այդ հարցում և կարելի է երկիւղ կրել, որ ապագայումս ևս Պետր թագաւորը չի կարողանայ ազատվել իրան շրջապատող օֆիցերների տէրրօրից։ Ամբողջ երկրում հիասթափութիւն է տիրում և ժողովուրդը սկսում է անհամբերութեան նշաններ ցոյց տալ։ Մինչև անգամ գիւղական ամենաարմատական տարրերը սկսում են ափսոսալ Օբրէնօվիչների արքայական տան կործանման վրա։ Գիւղական կուսակցութեան յայտնի պարագլուխները, որոնք առաջ Օբրէնօվիչների հակառակորդներն էին և Կարագէօրգիեվիչների կուսակիցները, սկսում են յայտնի կերպով յայտնել իրանց դժգոհութիւնը։ Սերբիայի վրա նորից հաւաքվում են սև, ծանր ամպեր, և կարելի է երկիւղ կրել, որ վերջին արիւնահեղ դրաման վերջին թշուառութիւնը չէր Սերբիայի համար։

—Սօֆիայի բարձրագոյն ուսումնարանի երկու պրօֆէսօրների նախաձեռնութեամբ մօտ օրերումս Սօֆիայում տեղի ունեցաւ մի մեծ միտինգ, որին մասնակցում էին բօլգարական քաղաքական բոլոր կուսակցութիւնները, ի միջի այլոց նաև սօցիալիստները։ Միտինգը որոշեց դիմել եւրօպական բոլոր պետութիւններին և խնդրել՝ թոյլ չը տալ Թիւրքիային ճնշելու Մակեդօնիայի ապստամբութիւնը խմբական կոտորածների և սպանութիւնների միջոցով, որոնք կատարվում են այժմ ոչ միայն բաշիբօզուկների և ալբանացիների միջոցով, այլ և Թիւրք կանօնաւոր զօրքի և քրդերի ձեռքով։ Երկրորդ միտինգի ժամանակ, որ պէտք է գումարվի շուտով, ժողովը պէտք է որոշէ, թէ ինչ դիրք պէտք է բռնեն բօլգարական կուսակցութիւնները դէպի երկիրը, իշխանը և կառավարութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—Նա մեղաւոր չէ, ես նրան զրպարտել եմ։

Այդ ձայնը շարունակ լսվում է իմ ականջում ամբողջ շաբաթ։

Մեղաւոր չէ, բայց զրպարտված է։

Զրպարտված, անուանարկված, խայտառակված։

—Ես դիմում եմ նրա ներողամտութեան, ասում է ձայնը։

Դարձեալ ներողութիւն խօսքը հանդէս է գալիս քաւելու մեղքերը։

Չը գիտեմ, ընթերցող, դուք գուշակեցիք արդեօք, թէ ինչ դէպքի և ինչ ձայնի մասին եմ ես ակնարկ անում։

Ես ձեզ յիշեցնեմ։

Դէպքը բնորոշ է։

—

Մի շաբաթ սրանից առաջ «Մշակի» մէջ տպվեց ուսուցիչ Աբրահամեանի նամակը։

Այդ նամակի մէջ ասված էր հետեւեալը՝

«Ես վարձված լինելով ուսուցիչ, (Պարսկաստանի Ղազվին քաղաքում) ամբողջ տարվայ ընթացքում միայն 90 րուբլի էի ստացել, իսկ 350 րուբլին մինչև յուլիս ամիսը մնում էր հոգաբարձութեան վրա։ Ես, չը ստանալով ռօճիկ, ապրում էի պարտքերով…

«Իմ դրութիւնը անել էր…

«Մի օր քահանան, երէցփոխը և մի երկու համախոհներ դիմում են ինձ և առաջարկում ազատել պարտատէրերից և վճարել իմ մնացած 350 րուբլին, եթէ ես կը ստորագրեմ նրանց թելադրած մի գրութիւնը»։

Ուսուցիչը նախ մերժում է, բայց յետոյ տեսնելով իրան անել դրութեան մէջ՝ ստորագրում է։

Սակայն ինչ է ստորագրում։

Մի ցած զրպարտութիւն արժանաւոր և անկեղծ մի մարդու մասին։

Բացատրեմ գործի էութիւնը։

Հոգաբարձութեան մօտ եղած մի տօմս, որ գումար է տարած լինում, անհետանում է։ Սակայն նրա փոխարէն դրված է լինում մի ուրիշը։

Բացվում է տեղի ունեցած մի քստմնելի խարդախութիւն։

Գումարվում է ընդհանուր ժողով, որ հայր նախագահի խոստովանութեամբ հաստատելով խարդախութիւնը, վճռում է անմիջապէս դուրս վռնդել քահանային…

Սակայն վճիռը չէ իրագործվում և գործը ուրիշ ընթացք է ստանում։

Հնարվում է մի ուրիշ մեղաւոր, որի վրա և բարդվում է յանցանքը։

Ինչպէս։

«Մի քանի պարոններ, որոնք անձնական թշնամութիւն ունեն Բէգլար Աղայեանցի դէմ, կամենում են օգտվել հանգամանքից և իմ միջոցով այդ խայտառակութիւնը բարդել Աղայեանցի վրա։ Ի պատիւ վերջինիս՝ պիտի խոստովանեմ, որ այդ թշնամութիւնը առաջանում է նրա դէպի հասարակական խնդիրները բռնած անկեղծ դիրքից»։

Ու ցած ինտրիգան աջողութեամբ է պըսակվում։

Ուսուցիչը զանազան սպառնալիքների ծանրութեան տակ ստորագրում է տէրտէրի թելադրութիւնը, ստանում ռօճիկի մնացորդը, վճարում պարտքերը և հեռանում ինտրիգայի որջից։

Հեռանում է և այժմ գալով Թիֆլիս, նա խոստովանում է ամեն բան։

«Ի սէր Աստուծոյ, խիղճս ծանրաբեռնված է, ազատեցէք ինձ այդ անել դրութիւնից։ Ես յայտարարում եմ ի լուր աշխարհի, որ Բ. Աղայեանցը այդ կեղծիքի մէջ ոչ մի մասնակցութիւն ոչ ունի, ոչ էլ կարող էր ունենալ և ես դիմում եմ նրա ներողամտութեան»։

Ահա բոլորը։

Ով է իսկապէս կեղծիք գործողը—դա չէ ներկայ դէպքում գլխաւոր հարցը։ Այլ այն, որ մի բոլորովին անմեղ մարդ կարող է ինտրիգայի շնորհիւ զրպարտվել և խայտառակվել։

Լրագրի այն համարը, որտեղ տպվել է ուսուցչի խոստովանութիւնը և յայտնած ներողութիւնը (№ 165) պէտք է կատարէր այն բարձր դատաւորի պաշտօնը, որ բացակայ էր Ղազվինի երկնքի տակ։

Առանց այդ խոստովանութեան մի անմեղ անձնաւորութիւն կը մնար զրպարտված և անուանարկված։

Ուսուցչի կատարած զրպարտութիւնը բացում է մեր առաջ սեփական իրականութեան ամենածանր և ամենատգեղ երեսներից մէկը։

Մի բան մեղմացնում է եղածը։

Գոնէ մարդը վստահութիւն ունեցաւ հրապարակօրէն խոստովանելու իր արած զրպարտութիւնը և մաքրել Բ. Աղայեանցի անունը արատից։

Իսկ որքան մարդիկ մնում են զրպարտված։

Ես անթիւ օրինակներ գիտեմ։ Գուցէ դուք էլ գիտէք ինձնից ոչ պակաս։

—

Իմ պատմած դէպքում զրպարտութիւնը տեղի է ունեցել ճնշման և սպառնալիքների ազդեցութեան տակ։

Սակայն յաճախ զրպարտութիւնները կատարվում են առանց ճնշումի, առանց այնպիսի անհրաժեշտութիւնների, որոնցով գոնէ կարողանային մարդիկ իրանց արդարացնել։

Ինչու։

Յայտնի չէ։

Ղազվինի Բեգլար Աղայեանցը, իբրև կենդանի նահատակ, անշուշտ շատ ծանր խորհրդածութիւններ է արել մարդկային բաղդի և առհասարակ մարդկանց մասին։

Ուսուցիչն էլ, որ իր չարը ձեռքից բաց չէ թողել, չարաչար մտատանջվել է և այսօր նա կանգնած է մեր առաջ իր ծանր խոստովանութեամբ։

Արժէ, որ ուրիշներն էլ մտածեն նոյնպիսի դէպքերի մասին։

Զրպարտվածներին մնում է Աղայեանցից սովորել համբերութիւն, իսկ զրպարտութիւն անողներին՝ գոնէ մեղքը խոստովանելու և անմեղի անունը մաքրելու համարձակութիւն։

—

—Ինչու, կը հարցնէ ընթերցողը, ես չեմ հարուածում ուսուցչին, որ թոյլ է տուել իրան այդքան տմարդի գործ, այդքան սոսկալի ոճիր մարդու պատուի դէմ։

Ահա ինչու։

Որովհետև այսօր ես զբաղված եմ ոչ մեղք գործելու թեմայով, ոչ քրէական քննութեամբ։

Ոչ։

Այլ մի կողմից զրպարտված լինելու սոսկալի դրութեամբ, իսկ միւս կողմից զղջման, խոստովանութեան գործողութեամբ։

Զրպարտութիւնը կատարվում է ամեն օր, ամեն մի ժամ։

Ի հարկէ մեծ ու փոքր չափով։

Բայց զղջացողներ և խոստովանողներ շատ քիչ են։

Զրպարտողը յաճախ սկսում է աւելի ևս յամառվել, որպէս զի նա չը համարվի զրպարտող։

Իսկ նրան ինչ փոյթ, թէ զրպարտվածի անունը վնասվում է։

Զրպարտված կարող են լինել ոչ միայն առանձին անհատներ, այլ և հիմնարկութիւններ ու համայնքներ։ Էութիւնը նոյն է։

—

Վերջացնում եմ բարոյախօսութեամբ։

Չը զրպարտենք անմեղին և չը խաղանք ուրիշի անուան և պատուի հետ, իսկ եթէ դըժբաղդութիւնը տեղի է ունեցել և մեղքը գործված է, խիղճ ունենանք զղջալու և քաջութիւն ունենանք մեր արածը խոստովանելու։

Վրձին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 օգոստոսի

ՇԱՆԳՀԱՅ։ Լուր է պտտում, որ հիւպատոսները միաձայն վճռեցին չը յանձնել չինական դատարանին խռովայոյզ գրուածքներ հրատարակելու համար կալանաւորված չինական ժուռնալիստներին։

ՊԱՐԻԶ։ Մի քանի ընդհանուր խորհուրդներ այն միտքը յայտնեցին, թէ պէտք է միջնորդ դատարանի մասին դաշնագիրներ կապել Հաագայի պայմանագրութիւնը ստորագրող պետութիւնների միջև։ Մի քանի խորհուրդներ կարծիք յայտնեցին առեւտրական բարեկամական դաշնագիր կապելու մասին Անգլիայի հետ։

ՊԱՐԻԶ։ Գեներալ Պէնդզէկ կը դրաւէ Լիօնում գեներալ Գրասսէի տեղը։ Վերջինս դուրս է գալիս ծառայութիւնից և կը հաշվի պահեստի զօրքի մէջ։ Պէնդզէկի յաջորդ, որպէս գլխաւոր շտաբի հրամանատար, կը լինի գեներալ Մատիս։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը հակամիտ է ընդունելու ռուսաց դեռ ևս չը կատարված ցանկութիւնները։

ՀԱԱԳԱ։ Վենեցուէլական մաքսահարկերից 30% ստանալու առաւելագոյն իրաւունքի վերաբերմամբ Վենեցուէլայի և պետութիւնների միջև ծագած վէճը լուծելու համար Թագաւոր Կայսրը նշանակեց հետեւեալ միջնորդ դատաւորներին՝ Կօպէնհագէնի համալսարանի պրօֆէսօր Մատցէնին, ռուսաց արդարադատութեան մինիստր Մուրավիէվին և Պարիզի շվէյցարական դեսպան Լարդիին։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղի ճապօնական դեսպանն ասեց, որ Ճապօնիան չի աշխատի օգուտ քաղել Ռուսաստանի այժմեան դժուարութիւններից Թիւրքիայի հետ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մակեդօնական ներքին կազմակերպութիւնը դիմեց Մօնաստիրի հիւպատոսներին մի մանիֆէստով, որի մէջ յայտարարում է, որ ինկատի ունենալով Թիւրքաց զօրքերի և բաշիբօզուկների ձեռքով կատարած բազմաթիւ սպանութիւնները, նա չէ կարող այլ ևս զսպել բօլգարական ազգաբնակութիւնը և հրաժարվում է բոլոր պատասխանատուութիւնից հնարաւոր հետեւանքների համար։—Բ. Դրան հաղորդագրութեան մէջ ռուսաց և աւստրօ-ունգարական դեսպանութիւններին՝ ասված է, որ հրոսակախմբերի պարագլուխներ Սարաֆօվ, Սանդօրսկի և Չէրնօփէվ գտնվում են Մօնաստիրի վիլայէթում։—Նորերս եղած թիւրքական պաշտօնական շատ տեղեկութիւններ ճիշդ չը դուրս եկան. օրինակ, շատ անգամ հաղորդվում էին տեղեկութիւններ Կրուշէվօն գրաւելու մասին, այն ինչ թիւրքերը մի քանի օր առաջ տիրեցին քաղաքի մի մասին, իսկ մնացած մասը և շրջակաները մնացին ապստամբների ձեռքում։ Միայն երէկ այդ մասերն ևս գրաւեց Բախտիար-փաշան։ Կորուստներն անյայտ են։

ԼՕՆԴՕՆ։ Հաւաքած տեղեկութիւնների համեմատ, անհիմն է «Daily Chronicle» լրագրի լուրը՝ միջերկրական նաւատորմի մի մասը Սալօնիկ ուղարկելու մասին։

Կ. ՊՕԼԻՍ։ Կռւի ժամանակ Կրուշէվօի մօտ և այդ քաղաքը գրաւելուց յետոյ թիւրքաց զօրքերը կողոպտեցին և սպանեցին շատ բօլգարներին և յոյներին տեղական ազգաբնակութիւնից։—Տեղեկութիւններ կան նոյնպէս Մօնաստիրի սանջակի ուրիշ մասերից թիւրքաց զօրքերի կատարած բազմաթիւ հրկիզութիւնների և կողոպտումների մասին։ Հրոսակախմբերի անկարգութիւնները անխնայ ճնշելու ժամանակ գործողութեան այդպիսի եղանակը անխուսափելի է։ Հրոսակախմբերի գործունէութեան մասին նորերս եղած թիւրքական պաշտօնական յայտարարութիւններից շատերի անճշդութիւնը բացատրվում է մասամբ նրանով, որ փաստերը դիտմամբ աղաւաղել են, մասամբ էլ—սխալներով։

9 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան կից առանձին յանձնաժողովը այն եզրակացութեան եկաւ, թէ անհրաժեշտ է տարածել հ. X. 683 յօդուածի ոյժը այն ծառայողների և նրանց ընտանիքների վրա, որոնք վնասվել են ճանապարհը պաշտպանելու և երկաթուղիների գոյքը պահպանելու ժամանակ, նոյնպէս և այն դէպքերում, երբ նրանց վնաս է հասնում մահվան կամ առողջութեան խանգարման պատճառով չարամիտ յանցաւոր փորձերից՝ իրանց պաշտօնական պարտաւորութիւնները կատարելու ժամանակ։

ՈՒՍԿԻՒԲ։ Մեծ յուզմունք է տիրում, որովհետև թիւրքերը խորհրդակցում են մզկիթներում։ Երկիւղ են կրում քրիստոնեաների վրա յարձակումից։ Վալին հրաման տուեց զէնքի կանչել Ուսկիւբի վիլայէթի ռէդիֆներին։

ՍՕՖԻԱ։ Ապստամբների մեծ թիւ երեւցաւ Ադրիանօպոլի վիլայէթի Լօզէնգրադ, Մալկօ-կօվա և Վասիլիկօ շրջաններում. վերջինս գրաւած ունէին ապստամբները։ Պատերազմից յետոյ գերի բռնվեցին բոլոր պաշտօնատար անձինք, հեռագրական թելերը կտրված են։ Աւերված է Պօտուրնակ մեծ գիւղը։

ՍՕՖԻԱ։ Ճիշդ չէ Ցօնչէվի և Եանկօվի ձերբակալման լուրը։ Իշխանը մտադրութիւն ունի եկող շաբաթվայ վերջը Բօլգարիա վերադառնալ։

ՍԱԼՈՆԻԿԻ։ Հանգուցեալ Ռոստկովսկու մարմինը արտակարգ գնացքով հասաւ հանգուցեալի ազգականների և հոգևորականութեան ուղեկցութեամբ։ Կայարանում զօրքերը և ժանդարմէրիան պատիւներ տուեցին։ Արքեպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց։ Կ. Պօլսից ռուսական պահականաւ է գալիս մարմինը Ռուսաստան տանելու համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Պատասխանելով ռուսաց դեսպանի օգոստոսի 7-ին յանձնած յայտագրին, Բ. Դուռը համաձայնվեց բաւարարութիւն տալ «Правительственный Вѣстникъ» լրագրում մանրամասն ցոյց արած բոլոր պահանջներին և հաղորդեց, որ բէլգիական չորս օֆիցէրներ են հրաւիրված. այդպիսով, հաշւելով Ռուսկիւքում գտնվող երկու շվէդական պօրուչիկներին, ընդամենը հրաւիրված են վեց էկսպէրտներ, որոնք կիրագործեն ժանդարմէրիայի վերակազմութեան գործը, որ նախատեսված է դեկտեմբերեան նախագծով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշւով, փակագծում Թիֆլիսի հաշւով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Փօստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Փօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Փօստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Փօստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրօպօլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաեւ. հիւանդ.

ՁԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ՔԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏՕՄԲԷԿՕՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Լ. Վ. ԲԱՐՏՕԼԴ—7—6 ժ. նեարդային (էլեկտրաբույժ) ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—8—8½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (Կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ե. Յ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարձամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ

ամառը ընդունում է հիւանդներ Պեատիգօրսկում։

Армянская ул,. д. Паджановой.
(չ. ուշ.) 21—20

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

յանձնարարում է

ԻՐ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏՆԻ

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՕՆ

Պահպանում է կաշուի փափկութիւնը
և աւելացնում է սպիտակութիւնը

ԿՏՈՐԸ 20 ԿՈՊԷԿ

1—10 143,186

(Мѣтцль). (ա. ամս. 10)

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ

Պատրաստված յատկապէս պետական դպրոցների հայ աշակերտների և աշակերտուհիների համար, աշխ. Եզնիկ ա. ք. Երզնկեանի։

1) Առաջին գրքոյկ, «Աղօթքներ (բացատրութեամբ) և գլխաւոր տօների (համառօտ) պատմութիւններ» գ. տպագ. գինը 20 կոպ.։
2) Երկրորդ գրքոյկի ա. մասը «Հին ուխտի ս. պատմութիւններ» (բացատրութեամբ) բ. տպագ. գինը 30 կոպ.։
3) Երրորդ գրքոյկի բ. մասը «Նոր ուխտի ս. պատմութիւններ» (բացատրութեամբ), գինը 30 կոպ.։

Գումարով գնողներին 30% զեղջում։

Դիմել՝ Тифлисъ, прот. Езнику Ерзинкянцу.
1—10

Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւն

Ընկերութեան ժամանակաւոր վարչութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն փայատէրերի, որ փայերի վճարները ընդունվում են՝ 1) Գէորգ Բաբուրեանցի մօտ (Դվօրցօվայա փ., «Առևտրական Տուն Ն. Բօզարջեանց և Որդիք»), 2) Ս. Գրիգորեան-Նիճայեկեանցի մօտ (Տէատրալնայա փող., պահեստ Կովկասեան Դեղավաճ. Ընկեր.) և 3) Արշակ Երուանդեանցի մօտ (Սերգիեվսկայա, № 11, գրասենեակ եղբ. Մ. և Գ. Փրիդօնեանների). (կ. չ.) 1—2

Ա. ՈՒԲԻՇԻ եօթդասարանեան առեւտրական դպրոցի տերատեսուչը (Վարշավա, Ֆրանցիշկանսկայա փողոց, № 2), տեղեկացնում է, թէ քննութիւնները նախապատրաստական և I, II և միւս դասարանները ընդունելու համար կը սկսվեն օգոստոսի 23-ին. Թէ ուսումնարանը ունի կառավարչական ուսումնարանների իրաւունքներ, ունի ինտերնատ և առողջապահութեան բոլոր կանոններին համապատասխանող բնակարան և թէ քրիստոնեաներին զիջումն կը լինի ուսման վարձ վճարելու մէջ։

(կ.) 3—5

Լոյս տեսաւ

ՅՈՎՀ. ԴՈՒՐԲԱԽԵԱՆԻ

„ԾԱՆՕԹ ՊԱՏԿԵՐՆԵՐ“

վերնագրով վիպական գրուածքը—հայ եկեղեցականների և երէցփոխների կեանքից։

Գինը 75 կոպ.։

Դիմել՝ հայ գրավաճառներին Թիֆլիս և Բագու. իսկ հեղինակին—հետևեալ հասցէով.
С.-Петербургъ, Лештуковъ переул. № 4.
Пушкинская Скоропечатня. 3—10

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են

Ժողովրդական-ընթերցանութեան համար հետևեալ գրքերը, որոնք արժեն 3—8 կոպէկ։

Երգեր ու վէրքեր. Ա. Իսահակեանի։ Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մալխասեանի։ Փոքրիկ Թմբկահարը, Ցուգայի վերջին գիշերը, թարգմ. Խ. քահ. Փանեանի։ Եկեղեցական սուրբ պատկերներ, Տ. Ց.։ Հրէայ Արնէքը թարգմ. օր. Շ. Տ.-ն.։ Գոռոզ Ազգէն, թարգմ. Հ. Ա.։ Վրէժ և հիւանդապահ աղջիկը, թարգմ. Լ. Մ. Ա.։ Չորրորդ մոգը, թարգմ. Ղ. Աղայեանի։ Կօշկակար երաժիշտ, թարգմ. օր. Ն. Ղուլիջանեանի։ Երիտասարդ Անգլիացին, թարգմ. օր. Շ. Տ.-նի։ Թռչունների աշնանային տեղափոխութիւնը և բնի ու ձուի որսը։ Անհրեւոյթ հողագործը, Լ. Մ. Աղամեանի։ Գոռոզ արմաւենին, թարգմ. Հ. Ա.։ Հօգածին և անմեռ աշխարհը, Ս. Քամալեանցի։ Խանձուած քար, Ռօշինի։ Աստուծոյ Տաճարը Տ. Ց.։ Հարիւր ամենալաւ գրքեր, թարգմ. Ս. Եղիազարեանի։ Մեր Խէչօն, Պռօշեանի։ Աստղերից երկինքը և երկրագունդը։ Վերադարձրած յանցաւորը, Ա. Եղիազարեանի։ Ցիս. Քրիստ. Մկրտութիւնը, Եմ. քհն. Նազարեանցի։ Խելագարի յիշատակարանը, թարգմ. Ս. Տ.-Մ.։ Մի անգամ աշնանը, թարգմ. Շահումեանի։ Լոխմանի հէքիմը, Ց. Եսայեանի։ Հասարակական թէօրիաներ, թարգմ. Սամվէլեան։ Ամայի դաշտում թարգմ. Իսահակեանի։ 26 տղամարդ մի աղջիկ, թարգմ. Մուշէ վարդապետի։ Թաթախման գիշեր, Լէօյի։ Անպոչ հորթը։ Հայր Մելոնը։ Ազգանշան։ Աստուծուն թէ մամոնային։ Ճշմարտութիւնը, թարգմ. Աթանասեանի։ Արդարն ու Մեղաւորը։ Մարդուս շատ հող է հարկաւոր, թարգմ. Վ. քհնյ. Մովսիսեանի։ Դիմակ, թարգմ. Ց. Եսայեանի։ Անիւտան, թարգմ. Ց. Եսայեանի։ Գրքացի տղուկներ, թարգմ. Ց. Եսայեանի։ Սև հացեր, թարգմ. օր. Ն. Աղամեանցի։ Ապուշը, թարգմ. նոյնի։ Վարժապետը թարգմ. Լ. Մ.-Ա.։ Մխիթարեան Միաբանութիւն, Ահարոնեանի։

Դիմել.—Книжный магазинъ „Гуттенбергъ", Тифлисъ, д. Лалаева, на Дворцовой улицѣ, Г. Галустяну. 1—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. կ.) 14—25

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ
102—105

ՄԻ ԿՐԹՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ընտիր ատեստատներով և րէկոմէնդացիաներով փնտրում է գանձապահի (кассиръ) կէսօրեայ (առաւօտից մինչև ժամի 3—4-ը) պաշտօն։ Հարցնել «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ 3—5

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4½ ամսում։

ԾՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշւապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, փոխառական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաւ. նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։ 2) Առեւտրական թուաբանութիւն։ 3) Առեւտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առեւտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն եւ ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Րէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար եւ հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5 մինչև 7 երեկ.։ Պարապմունքները սկսվում են 1903 թ. սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում. Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. կ.) 10—25

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА
XVI-ый годъ изданія XVI-ый

СѢВЕРЪ

[illegible] ИЛЛЮСТР. ЛИТ. ХУД. ЖУРНАЛЪ

Въ 1903 году гг. подписчики получатъ БЕЗПЛАТНО **24 КНИГИ** СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ **Вс. С. Соловьева.**

автора историч. роман. „Сергѣй Горбатовъ", „Вольтерьянецъ" и др.
Въ каждой книгѣ отъ 112 до 240 и болѣе стран., отпечатан. на глазир. бумагѣ
Это собраніе сочиненій стоитъ 15 руб.

52 №№ роскошно иллюстрированнаго журнала, въ которомъ будетъ печататься новый интересный романъ гр. Е. А. Саліаса „Ло[illegible]"; 52 №№ женед. обозрѣнія политической и общественной жизни; 12 №№ журнала „Парижскія Моды, Хозяйство и Домоводство", со множествомъ рисунковъ и полезныхъ указаній; 12 №№ выкроекъ на отдѣльныхъ большихъ листахъ.

Кромѣ всего этого, годовые подписчики получатъ БЕЗПЛАТНО большую картину проф. **Ю. Ю. КЛЕВЕРА** „ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ" Размѣръ картины, отпечатанной масляными красками, 12×18 верш. Въ отдѣльной продажѣ цѣна этой картины 5 руб.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ безъ дост. въ СП.—6 р., съ дост. и перес. 7 р., на 6 м.—3 р. 50 к., на 3 м.—1 р. 75 к., за границу—11 р. РАЗСРОЧКА допускается по полугодіямъ и четвертямъ года. Подписки просятъ адресовать на имя редактора-издателя Ник. Өед. Мертца. (СПБ., Невскій, 170).

ГЛАВНАЯ КОНТОРА ЖУРНАЛА „СѢВЕРЪ": СПБ., НЕВСКІЙ, 170.

22—20

Дозволено Цензурою. Тифлисъ, 9 августа 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.